



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 սեպտեմբերի 2024 թվականի N 3957

**ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, 2007 թվականի օգոստոսի 09-ի N 1036-Ն որոշման, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, Արմվյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Գայանե Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N Ք-6777)։

1. Փոփոխել Գայանե Սարգսյանին պատկանող (հիմք՝ 2024 թվականի մայիսի 10-ի N 10052024-07-0041 վկայական) Արմվյան համայնքի Արմվյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 15/10 հասցեում գտնվող 24.4 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման հողամաս։

2. Գայանե Սարգսյանին պատկանող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 25112022-07-0142 և 2024 թվականի մայիսի 10-ի N 10052024-07-0041 վկայականներ) Արմվյան համայնքի Արմվյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 15/9 և թիվ 15/10 հասցեներում գտնվող անշարժ գույքերին՝ «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի սեպտեմբերի 17-ին կազմված միավորման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել միասնական հասցե՝ համայնք Արմվյան, քաղաք Արմվյան, 3-րդ միկրոշրջան, 15/9։

3. Գայանե Սարգսյանը պարտավոր է.

1) Արմվյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 7 440 (յոթ հազար չորս հարյուր քառասուն) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար։

2) Արմվյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 20  
ք. Արմվյան

Սեփականատեր


Գայանե Նիկողայի Սարգսյան

**ՀՊՐԱՄԱՍԻ ՄՐԱԿՈՐՄԱՆ ԱԽՆԵՄԱ**

Նոտարաբար մաքրված Արտաքին հասցեայք. ք. Արտաքին 3-րդ միջ. 15/9  
ք. Արտաքին 3-րդ միջ. 15/10

Սեփականության վկայականներ N 25112022-07-0142 և 10052024-07-0041

Նոտարատեղումներ



Մակերես հա	
Օսովազիտ	
Նպատակային նշանակություն	
Գործարարական նշանակություն	

**Լրացուցիչ տրամեղ.**

Սակերես հա	
Օսովազիտ	
Նպատակային նշանակություն	
Գործարարական նշանակություն	

Մասշտաբ 1:200

Պրակավորում ունեցող անձ

Պրակավորման վկայականի համարը

Ստորագրություն

Իրավաբանական անձի անվանումը

ՀՎՀՀ

Ստորագրություն

անհատական	հատվածի կազմման
13.08.2024	12.08.2024

Կանխ վերինման

0339

«ԳՐԱ ԱՐՏԱ» ՍՊԸ

03532649



ԿՏ

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մեխականաժողով  
 Գայանե Նիկողոսյան Սարգսյան

Կողտալիքի մալրը Արվածքի համալիր: ք. Արվածքի 3-րդ մկշ.


Մալրի համալիրի մալրը:

Մեխականության վկայականներ N 25112022-07-0142 և 10052024-07-0041

Կողտալիքի մալրի մալրը

Հաստատված է: 2024թ. 12.05.2024

Համալիրի ղեկավար: Կ.Ս.



ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՑՄԱՆ ԳՐԱԿԱՆԱԿ

Մասշտաբը 1:200

Մակերեսի հասցե	0.01244
Օճի մակերես	07-002-0058-
Նախատեսված նշանակություն	բնակավայրերի
Գործարարական նշանակություն	հաս կառ. 0.0100, բն. կառ. 0.00244

Լրացուցիչ նշումներ:  
 Թիվ 1,2 գոյություն ունեցող շինություններ

ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՑՄԱՆ ԳՐԱԿԱՆԱԿ	
----------------------------------	--

Որակավորում ունեցող անձ	Մասշտաբը 1:200
Որակավորման վկայականի համարը	
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	
ՀՎԿԿ	
Ստորագրություն	
ամիս	13.05.2024
ամսաթիվ	17.05.2024
հատուկագծի կազմման	







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 սեպտեմբերի 2024 թվականի N 3956

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ  
ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱԴԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի.

1. Հայտարարել մրցույթ Արովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
2. Մրցույթը կկայանա 2024 թվականի հոկտեմբերի 22-ին:
3. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 20

ք. Արովյան

Արվյան համայնքի ղեկավարի  
2024 թվականի սեպտեմբերի 20-ի



### Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կոտայքի մարզի Արվյան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Արվյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Գործառույթներն են՝ կազմակերպում է բնակչության մշակութային պահանջմունքների բավարարումը, ոչ նյութական մշակութային ժառանգության ավանդույթների պահպանումը, զարգացումը և տարածումը, հաստատության կրթական գործունեության իրականացումը ի շահ անհատի, հասարակության և պետության, երեխաների կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար պայմանների առկայությունը, խմբակների միջոցով պատանիների և երիտասարդների՝ պարի, երաժշտության, արհեստների, թատերական, նկարչական և այլ ուղղվածության ուսուցման իրականացումը, խմբակների միջոցով մարզական պարապմունքների իրականացումը, տարբեր բնույթի մշակութային միջոցառումների՝ ցուցահանդեսների, մրցույթների, փառատոնների, կինոցուցադրումների, սովորողների հանգստի և ժամանցի իրականացումը.

Իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ է:

Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Կոտայքի մարզ, Արվյան համայնք, գյուղ Արամուս, Կենտրոնական փողոց 16:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն.
  - 2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:
- Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝
- 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
  - 2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
  - 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
  - 4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
  - 5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
  - 6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա **2024 թվականի հոկտեմբերի 22-ին ժամը 10:00-ին** Արվյանի համայնքապետարանի աշխատակազմի շենքի նիստերի դահլիճում (ք. Արվյան, Բարեկամության հր-1):

Մրցույթի համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **07.10.2024թ.**  
Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Աբովյանի համայնքապետարանի  
աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային  
գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող  
փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող  
ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և  
պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող  
փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում  
է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմում  
(ք. Աբովյան, Բարեկամության հր-1, 2-րդ հարկ, իրավաբանական բաժին, հեռ. 060 53-  
64-41, 060 53-64-27) ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի  
օրերից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3955

ՍԻՐԱՆՈՒՇ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի, 219.1-ին, 244.9-րդ, 275-283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 302-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 11-ի քաղաքաշինության ոլորտում վարչական իրավախախտում թույլ տալու փաստի մասին N 38 արձանագրությունը և վարչական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 19-ի արձանագրությունը.

1. Հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար Սիրանուշ Ալեքսանյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նշանակել վարչական տուգանք՝ 100 000 (հարյուր հազար) դրամի չափով:

2. Սիրանուշ Ալեքսանյանը պարտավոր է սույն որոշումն իրեն հանձնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Աբովյանի համայնքապետարանի 900105201272 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Աբովյան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողով:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել կամ վարչական կարգով Աբովյան համայնքի ղեկավարին՝ այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սիրանուշ Ալեքսանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19  
ք. Աբովյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3954

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ Պ. ԴՈՒՐՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ  
ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշման, հաշվի առնելով համաձայնեցված ուղեգիծը (ՎՆ-ՇԹ-991) և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության դիմումը ( մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N Տ- 1804) .

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը N 85799111 (10986-ԷՍ) տեխնիկական պայմանի ուղեգծով տրամադրել Արովյան համայնքի Առինջ գյուղի Պ. Դուրյան թաղամասի 1-ին փողոցի թիվ 10 հասցեում գտնվող «ԷՂՆՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող տարածքի 0.4 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105204243 հաշվեհամարին մուծել 3 000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը և այլ շահագրգիռ կազմակերպություններին:
4. Քանդված հատվածները վերականգնել տասնհինգօրյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19  
ք. Արովյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔ ՄԱՐԶ**  
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ**  
**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ N ՀՇԹ//8-2024**  
**19 Սեպտեմբերի 2024թ.**

Տեղիւմ է նախագահուող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՆ ՑԱՆՅԵՐ» ՓԲԸ, պետական գրանցման վկայականի համար՝ 273.140.01857 ՀՀ, Երևան, Եղրք-մարաշ, Ա. արմենակյան փ., 127: Հոգամասի գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Պ. Դուրյան թաղ. 1-ին փողոց, 10 հասցե

**Հուսանքագծի կառուցում օբյեկտի արդիականացման աշխատանքների (բառարման համար**

Գծումն ունենեալական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետազոծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են **Աշխատանքային նախագիծ**, կողմից:

2. Ծննդաբանական աշխատանքներն իրականացնել  
**12 ամիս** ընթացքում:

3. Դատարարականներ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունը սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում՝ պարտավոր է հաստատել և վճարների տրոհման օգտին ուսման համաձայնության գալ կառուցապատման հետաանքով պատմեր արդյունքների հետ:

2) շինարարության լուծվող դրամա սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն հոդված N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պատանջերը:

4. Թողութային հիման վրա գտնված շինարարական և գույքաբան աշխատանք կարող է իրականացվել քառասուն (40) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պատանջերին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝**

**ԵՂՈՒԲԱՐԻ ԲԱԲԱՅԱՆ**  
Կառուցարարության նախարար

(ձևը լրաց. 23.03.17 N 280-Ն)

Digitally signed by BABAYAN EDUARD  
1908720417  
Date: 2024.09.23 16:08:51 AMT



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3953

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՐԳԵԼ ԳՅՈՒՂԻ Հ. ՎԵՐՂՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Արևմտյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշման, հաշվի առնելով Վաղարշակ Քոչինյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի օգոստոսի 23-ի N Ք-6473).

1. Արևմտյան համայնքի Գետարգել գյուղի Հ. Վերդյան փողոցի վրա գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 55.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 27.40 քառակուսի մետր արտաքին և 23.21 քառակուսի մետր ներքին մակերեսներով ավտոտնակը, 0.16 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել Արևմտյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20239S2DZ8):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունները, համաձայն համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա: Ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:

3) շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված որպես բնակելի կառուցապատման հողամաս և տրամադրել հասցե՝ համայնք Արևմտյան, գյուղ Գետարգել, Հ. Վերդյան փողոց, 1-ին փակուղի, թիվ 89:

5. Սույն որոշումն՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը:

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցներն իրականացրած Վաղարշակ Քոչինյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցները և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման օրվանից մասին իրագրվելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 19

ք. Արևմտյան



Հողամասի			Գծալին ցիլր
Երջարդային (ըեկման) կետեր	Y	X	
1	8465782.484	4456956.656	5.20
2	8465781.320	4456961.822	6.95
3	8465780.047	4456968.65	4.02
4	8465783.993	4456969.397	6.78
5	8465785.989	4456962.918	0.2
6	8465786.033	4456962.723	5.71
7	8465786.570	4456957.035	4.11
1	8465782.484	4456956.656	

1 Ավտոտակ			Գծային չափերը
Երջարդային (ըեկման) կետեր	Y	X	
1	8465781.339	4456961.852	6.92
2	8465780.056	4456968.652	3.96
3	8465783.948	4456969.396	6.92
4	8465785.231	4456962.586	3.96
1	8465781.339	4456961.852	

Որակավորում ունեցող անձ

Որակավորման վկայականի համարը

Ստորագրություն

Իրավաբանական անձի անվանումը

ՀԱՅԴ

Ստորագրություն

ամիս

չափազրություն

հատակագծի  
կազմման

07.06.2023թ.

23.08.2024թ.





**ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Մարզ, համայնք, հասցե

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
Հ/Հ	դասվեսիդդոճո ղվմոհոտոհո	դասվեսիդդոճո ղոհոդոսոմոնո	հոմո	դասվեսիդդոճո	Օրհոհոդոճո	ղոհոդոճո	(ո) դասվեսիդդոճո	(ոո) լոհոդո	հվեսիդդոսո ղորոնոսոնո	նղեսիդ	/մոդվճ/ մոճոմեսիդ	մնոսիդնո	եսնղ ճիդոսիդդոսոճ լո	սոմոհոդո	ղոհոդոճո 50%	50%-80%	վղիո ո %08	ղվմոճոսոհոդոդո	հոմոմոնոճոսո ղոդոհոտոմոնոճո	հոմոնո	Փոս	ղսոդդեսիդ	նոսոդո	ևոսոդո	<հոմո ճորոնո ոհո ոսնղ>	սոմո	լո ' մոճո սոնոնոսի ' մոճո ոոսո	եսնղ լոն ոոհո սոմո	ղսոդդեսիդ	Միջոսիկոն ծոճոի ոոլո	Մոսոսիո հորոսոնո ոսո կոլոնոի	ղորոմոնոսո ղվճոսոմո նոնո		
1	Բնակելի	Նվոնոնո	1	1	23.21	0.16	1.86	43.17	1986		V						V					V												
2	Բնակելի	սոսոսո				0.16	1.50	0.24	1986																									

Շինոթյունների բնոհոնոնոնո մակերեսո (քմ)	Մոլ թվոմ
35	Օրհոնոսիոն կոսոոսվոճո (քմ)
23.37	Բնոնոսիոն կոսոոսվոճո (քմ)
23.37	37
	23.37





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3952

**ՄՆԱՑԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Մնացական Կարապետյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N Բ-6763).

1. Մնացական Կարապետյանին տալ օժանդակ շինության կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է):
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մնացական Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 19  
ք. Արովյան





7. Քննության ուսուցիչ պահպանվող և (կամ) պատմամշակույթային հուշարձանների տարածքներ (նշված պատմաքան գոտիներ)

Առկա չեն

8. Ընդհատվածային զարմանա տակմաներ

Հաշվի առնել կից տարածքներում առկա և անհատավոր կատուցակ բնույթում

Նշում: Ընդհատվածային զարմանա տակմաները պետք է նշվեն համապատասխան ընդհատվածային զարմանա տակման հարկային օրենսդրության համապատասխան հոդվածներում:

**Ն Ա Տ Ա Գ Ց Ա Յ Ի Ն Դ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը**

(ստորանիշով (\*)) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Հարտարապետահատակագծային նախագիծը մշակել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետաշարժանքման վկայականով տրված ուղղորտարածքի սահմաններում:

Նշում: Ընդհատվածային զարմանա տակմաները պետք է նշվեն համապատասխան ընդհատվածային զարմանա տակման հարկային օրենսդրության համապատասխան հոդվածներում:

9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը դառնիք շինությունից (մետր)

քառ կողմերի

9.2. (\*) հեռավորությունը հարևան հողատիրուներից (օբյեկտներից) (մետր)

քառ կողմերի

9.3. (\*) օբյեկտի քառ կողմերից (մետր)

Մինչև 5.0 մ

Նշում: Ընդհատվածային զարմանա տակմաները պետք է նշվեն համապատասխան ընդհատվածային զարմանա տակման հարկային օրենսդրության համապատասխան հոդվածներում:

9.4. Կանոնադատման իրավության գործակիցը (կառուցքի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

քառ կողմերի

9.5. կանոնադատման տուկուց (կանոնադատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տուկուներով) (%)

Մինչև 40 %

9.6. կանոնադատման տուկուց (կանոնադատ տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տուկուներով) (%)

60 % և ավելի

9.7 այլ պահանջներ

• Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով կորմատիվային պահանջները՝ Համաձայն Արդյան համայնքի ավագանու՝ 06.12.2022թ. N 174-Ա որոշման շինությունների արտաքին պատերի համար նախատեսել սպիտակ, մուրազույն, ծիրանագույն երանգները, կապույտկանաչ ու աշխարհային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապույտկանաչ երանգները

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ սեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հնարականությունը

Առկա չէ

11. Ստորգետնյա, կիսանկյուղի և արաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն նորմերի

12. (\*) Ինժեներական ցանցեր և օտրգափրոանաք

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող օտրգափրոացվածքների և ցանցերի նկատմամբ

12.1. (1) քրեական ենթարկում  
կրթում, տար քրի  
կամ անարարում

Համաձայն հրովանդ

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. և 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

12.2. (1) Ելնկարգում առկա արարում

Համաձայն նորմերի

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

12.3. (1) Բազմապատկարարում

Համաձայն նորմերի

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

12.4. (1) Ելնկարգում առկա  
հարցը քրեականում մարտնչատար  
կրթում (անհատալի գիտատիրոջ  
սեղանի իրը)

Համաձայն նորմերի

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

12.5. քրեի համակրներ

Սուկա չեն

12.6. Կարգում անհատը

Խանայնքային

13. Բարձրագույն հիմնական  
կարգում անհատը

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

14. Բարեկարգում

Ազատ տարածքը բառևարգել և կանաչատարել:

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

15. Շինարարական կյուրեր

Երկարքիտուն տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

16. Բազմապատկար կարողներ

Ըստ նախագծի

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

17. Հանկարգի հային  
պահանջներ

Սպասելով ռակահրդեհային նորմատիվ պահանջները

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

18. Կարգում անհատը և  
քրեական անհատը  
խմելով՝ պաշտատարության  
միջոցառումներ

ըստ նորմերի

19. Շրջանակ միջավայրի  
գրգռում

Կապիտուլել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան  
միջոցառումները

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

20. Գրգռում անհատը  
կարգում անհատը

Ըստ նորմերի

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

21. Մտաւտոսկի գործողության  
տարածք և նախագծի մշակման  
փուլերը

19.09.2025թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

## Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Պ Ա Ց Մ Ա Ն Ն Ե Ր Ը

22. Առաջատար  
տնտեսողների  
փորձագետությանը  
կերպարագող պահանջներ

Պարզ փորձագետություն (կարող է փոխարինվել նախագծողի  
երաշխավորագրով) հարվավոր է

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

23. Միջանկար համաձայնեցում

չի պահանջվում

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

24. Համաձայնեցում  
քննարկումներ

Նորմերի համաձայն

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.

25. Համաձայնեցումների կամ  
Մտաւտոսկի մշակման  
տարածքի գրգռում անհատը

• Սրբյն նախագծային աշխատանքները սկսելով՝ համաձայնություն ձեռք  
բերելով, յուրաքանչյուր հիմնական հիմնախառնակների սեփականատերերի  
(օգտագործողների) հետ • Համաձայնեցում կարգաւ հարմար  
սեփականատեր(երի) (օգտագործող(ներ)) հետ

Համաձայն հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ. հրովանդի 19.09.2025թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3951

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 2/895 ՀԱՍՑԵՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ  
ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Արվյան համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 16-ի N 06-Ա որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավտոտնակի զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 09-ի N 1036-Ն որոշմամբ հաստատված Արվյան քաղաքային համայնքի գլխավոր հատակագծով ներառված է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով Մամիկոն Եփրեմյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի N Ք-6805)։

1. Մամիկոն Եփրեմի Եփրեմյանին պատկանող (հիմք՝ 2021 թվականի հունիսի 07-ի N 07062021-07-0062 վկայական) Արվյան համայնքի Արվյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի թիվ 2/895 հասցեում գտնվող ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար առանձնացված 25.5 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել Մամիկոն Եփրեմյանին։
2. Մամիկոն Եփրեմյանը պարտավոր է Արվյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 412 504 (չորս հարյուր տասներկու հազար հինգ հարյուր չորս) դրամ՝ հողամասի գինը։
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մամիկոն Եփրեմյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19  
ք. Արվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3950

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ  
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Հարություն Մարգարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 16-ի N Բ-6835)։

1. Արովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող անշարժ գույքին (հիմք՝ 2003 թվականի հոկտեմբերի 28-ի N 16092024-07-0044 վկայական) տրամադրել հասցե՝ համայնք Արովյան, գյուղ Արամուս, Տիգրանաձորի խճուղի, 14:

2. Հարություն Մարգարյանը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19

ք. Արովյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3949

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ ԳՏԵԿՈՂ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ  
ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, N 912-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, հաշվի առնելով Համազասպ Անդրեասյանի լիազորած անձ Բաբկեն Դավթյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի հուլիսի 02-ի N Ք-4782)։

1. Արովյան համայնքի Արովյան քաղաքի Հանրապետության պողոտայում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 14.7 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 14.7 քառակուսի մետր արտաքին և 13.30 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական նշանակության սպասարկման օբյեկտի մասը համարել Արովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022F5P0DX)։

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) սպասարկման օբյեկտի մասի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը։

2) սպասարկման օբյեկտի մասը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում։

3) սպասարկման օբյեկտի մասը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք։

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված սպասարկման օբյեկտի մասի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է)։

4. Սույն որոշման 1-ին կետում նշված սպասարկման օբյեկտի մասը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Արովյան, քաղաք Հանրապետության պողոտա, 142/1։

5. Սույն որոշումն՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը։

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Համազասպ Անդրեասյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունվելու մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Է. ԲԱԲԵՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19  
ք. Արովյան

Ձև 1

Հաստատում 03.07.2014թ.

Համայնքի ղեկավար



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Կոտայքի մարզ Արոյան համայնք, ք. Արոյան Հանրապետության պորտա թիվ 20/10 հասցեին կից

մարզ համայնք հասցե:

Խողախարակցանքի թիվը:

Սեփականատեր

Արոյան համայնք



Մակերես հա 0.00147

Ծածկագիր 07-002-0082-

Սպաստակալին նշանակություն բնակավայրերի

Գործարական նշանակություն հաս. կար.

Լուսցուցիչ նշումներ.

Ընդհանուր համար	Հողամասի կոորդինատներ		Մեզիքի թիվ
	Y	X	
1	8468241.5616	4459713.4949	3.07
2	8468242.3397	4459716.4610	0.30
3	8468242.6297	4459716.3842	8.45
4	8468250.7985	4459714.2204	0.30
5	8468251.0885	4459714.1436	1.44
6	8468250.7220	4459712.7464	8.25
7	8468242.7275	4459714.7789	1.54
8	8468242.3682	4459713.2813	0.83
1	8468241.5616	4459713.4949	

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ

Որակավորման վկայականի համարը

Ստորագրություն

Իրավաբանական անձի ավանտներ

ՀՎՀՀ

Ստորագրություն

Վաճառողի պարտավորում

03339

ԳԻՍ-ԱՐՏ ՍՊԸ

03532649

Վաճառողի պարտավորում

Վաճառողի պարտավորում

17.03.2014

16.07.2014

U.S.





1. խճ. սպ. օրվերի մաս

Երջանակ ծախմ ընկման կետեր	Կտրողներ		Ճշգրտ (%)
	Y	X	
1	8468241 5616	4459713 4949	3.07
2	8468242 3397	4459716 4610	0.30
3	8468242 6297	4459716 3842	8.45
4	8468250 7985	4459714 2204	0.30
5	8468251 0885	4459714 1436	1.44
6	8468250 7220	4459712 7464	8.25
7	8468242 7275	4459714 7789	1.54
8	8468242 3682	4459713 2813	0.83
1	8468241 5616	4459713 4949	

Պրակավորում ունեցող անձ		Վառի վերադրված
Պրակավորման վկայականի համարը		0339
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«ԳՐԱՄԱՍԿԻՆ»
<վ><		03532649
Ստորագրություն		03582649
Ամիս	Հախագրության	
անսափի	հատակագծի	
	կազմման	




Կոտայքի մարզ Արովյան համայնք, ք. Արովյան Հանրապետության պողոտա թիվ 20/10 հասցեին կից

մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր

Արովյան համայնք



1. Ուղարկ  
h=2.50  
D=0.10

$S_{արտ.} = 14.7 \text{ քմ}$

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Վահե Վարդանյան	
Որակավորման վկայականի համարը	0339	
Ստորագրություն	<i>[Signature]</i>	
Իրավաբանական անձի անվանումը	ԳՐԾ-ԱՐՏ ՍՊԸ	
ՀՎՀՀ	03682649	
Ստորագրություն	<i>[Signature]</i>	
ամիս	հավաքության	11.03.2024
ամսաթիվ	հատակագծի կազմման	16.07.2014







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3948

**ԳՈՀԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով ԱրոՎյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշումը և Գոհար Ստեփանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 03-ի N Ք-6631)։

1. ԱրոՎյան համայնքի Կաթնադրյուր գյուղում գտնվող, Գոհար Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի մարտի 28-ի N 28032024-07-0212 վկայական) 07-034-0106-0031 կադաստրային ծածկագրով 0.05 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (վարելահողի) նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

2. Գոհար Ստեփանյանը պարտավոր է 0.05 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար ԱրոՎյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 1 443 750 (մեկ միլիոն չորս հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գոհար Ստեփանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 19  
ք. ԱրոՎյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3947

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ  
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 45-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի պետի տեղակալի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N Բ-6786)։

1. Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքին (հատակագիծը կցվում է) տրամադրել հասցե՝ համայնք Արովյան, քաղաք Արովյան, Ռոսիայի փողոց, 4 շենք, 184/2 բնակարան։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 19

ք. Արովյան

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում են

202 թ.

Մարզ Կոտայք համայնք Արծվյան, Ռոսիայի փառոց շենք 4 բնակարան 184

Համայնքի ղեկավար

Կ Ս.

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր

Բարիս Մխիթարյան, Անահիտ Ոսկանյան, Էդգար Մխիթարյան, Էլմիրա Մխիթարյան, Աշխեն Մխիթարյան

## Բնակարան


7-րդ հարկ

H=2.9

h=2.7

D=0.15-0.25

d=0.15-0.25



Համայնքային սեփականություն

### Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	սեռն առժամանակ ընթացակարգում	
Որակավորման վկայականի համարը		
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը	ՅՈՒՐԻԴԱԿԱՆ ԿՈՄՊԻՆԻՍՏԻԲԻԼԻՏԻ ԿՈՒՆՎԵՆՏ	
ՀՎՀՀ	1857379	
Ստորագրություն		
ամիս	չափագրության	06 09 2024թ.
ամսաթիվ	հատակագծի կազմման	09 09 2024թ.



# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում են

202\_թ

Մարզ Կոտայք համայնք Աբովյան, Ռոսիայի փառոց շենք 4 բնակարան 184

Համայնքի ղեկավար

Կ.Տ.

Սարգ, համայնք, հասցե

Սեփականատեր

Բարիս Մխիթարյան, Անահիտ Ոսկանյան, Էդգար Մխիթարյան, Էլմիրա Մխիթարյան, Աշխեն Մխիթարյան

**Բնակարան**


7-րդ հարկ

H=2.9

h=2.7

D=0.15-0.25

d=0.15-0.25



Լրացուցիչ նշումներ

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	ստոյան ընկերություն	
Որակավորման վկայականի համարը		
Ստորագրություն	«ՅԱՐԴ»	
Իրավաբանական անձի անվանումը	«ՅԱՐԴ» ՍՊԸ	
ՀՎՀՀ	03574379	
Ստորագրություն	03574379	
ամիս	չափագրության	06.09.2024թ.
անսաթիվ	հատակագծի կազմման	09.09.2024թ.



# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Հաստատում են \_\_\_\_\_ 202\_թ

Մարզ Կոտայք համայնք Աբովյան, Ռոսիայի փաղոց շենք 4 բնակարան 184

Համայնքի ղեկավար Կ.Տ

Մարզ, համայնք, հասցե

Անփականատեր Բարիս Մխիթարյան, Անահիտ Ոսկանյան, Էդգար Մխիթարյան, Էլմիրա Մխիթարյան, Աշխեն Մխիթարյան



## Բնակարան

7-րդ հարկ

H=2.9

h=2.7

D=0.15-0.25

d=0.15-0.25

### Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	ստոս առտորի ԲՅԱԲՅՈՒՆ	
Որակավորման վկայականի համարը		
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը	«ԿՐԻՍ ԿՆՅՈՒՆ» ՍՊԸ	
ՀՎՀՀ	03574379	
Ստորագրություն		
ամիս	չափագրության	06.09.2024թ
անստաթիվ	հատակագծի կազմման	09.09.2024թ






## Շինությունների բնութագրիչը

Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Հարկ	Հարկայնությունը	Մակերեսները (քմ)		Բարձրությունը (մ)	Ծավալը (հմ)	Կառուցման տարեթիվը	Տամիցից նյութը				Ավարտականության աստիճանը				Պատերի շինանյութի տեսակը	Միջնորդական ծածկի նյութը		Արտաքին հարդարման ըստ կտրմանի				
				Օրինական	Ինքնական				թիթեղ	շիֆեր	կղմինդր	ալյուսիթ	անավարտ	մինչև 50%	50-80%	80% և ավել		փայտ	երկաթբետոն	սրբատաշ	երեսապատված	սվաղած	ապակեպատ	արտաքին
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
Բնակելի	Բնակարան	7	9	94,50		2,70		Կ/Գ	Կ/Գ	Վ						Վ	Բետոն		Վ					4
Բնակելի	Բնակարան	7	9	9,70		2,70		Կ/Գ	Վ							Վ	Բետոն		Վ					4

Շինության ընդհանուր մակերեսը	Այդ թվում	
	Օրինական կառուցված (քմ)	Ինքնական կառուցված (քմ)
27	28	29
104.2	104.2	

Կատարող ԲՆԱՅԻ (ստորագրություն) Աջոտ Արտոորի Բարսյան  
 Որակավորման վկայական «0501» տրման ամիս, ամսաթիվը  
 Իրավաբանական անձ 80.110.1370645 «ՅԱՐԴ» ՍՊԸ

05.08.2024  
 «13.08.2024»թ. (ամիս, ամսաթիվ)  
 Իրավաբանական







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3946

ԱՐՏՅՈՄ ՇԱՐՈՅԱՆԻՆ ԵՎ ՍԵՂԱ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, ԱրոՎյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշման, հաշվի առնելով Արտյոմ Շաբոյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N Ք-6758)։

- Արտյոմ Շաբոյանին և Սեղա Սաֆարյանին տալ բլոկացված առանձնատների կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է)։
- Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են ԱրոՎյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 600 000 (վեց հարյուր հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար։
- Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է ԱրոՎյան համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք։
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19  
ք. ԱրոՎյան



ՓՈՒՆԵՐԱՆՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՓՈՒՆԵՐԱՆՈՒՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ

N ՇԹ/752/193-24 19-09-2024

Տոմար 1 կատարացալատող ՍԵՐՆԱ ԴԱՖԱՐՅԱՆ / 6407490286 / ԵՐԵՎԱՆ, ԱՐԱՔԿԻՐ, ԳՅՈՒԼՆԵՆՍԿԱՆ Փ., 21Ծ,  
ՅՄՆԱՐՏՅՈՒՄ ՇԱՐՈՅԱՆ / 7405830060 / ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՎԱՐՂԵՆԻՍ, ԱՅՐՔ, 15 Փ., 16Տ, Մարզ Կոտայք, համայնք  
Արտվան գյուղ Առինջ Կ. Հովազիյան փողոց 2-րդ փակուղի 2/1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ հաստատվում է հետևյալը

Օգտագործողները՝ կատարում, բրնկացված առանձնատներ, Ռիսկայնության աստիճանը III

Օգտագործողները պետք է լինեն հայաստանի քաղաքացիներ կամ օտարերկրացիներ, որոնք համապատասխանում են հետևյալին

1) մշակվել են «Աշխատանքային նախագիծ», «ԵՅՎԻԵՆ ԳՐՈՒՂ» ՍՊԸ կողմից:

Օգտագործողները պետք է լինեն հայաստանի աշխատանքային արժեքի բարձր մակարդակի վերաբերյալ

տեսքով է (են) 13.08.2024թ. N323-24 փորձագիտական դրակալ, կրթականության ներկայացուցչությունից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

«ԱՎՈՆ» ՍՊԸ կողմից

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

կամ

կատարածը հարցազրույցի արժեքային աստիճանի և սպասարկողի երաշխավորագրից

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

3) չեն կենցած կրթում համաձայնեցվել են հրավառու մարմնի, որենքով սահմանված այլ շահագրգիռ  
առարկերի՝ Արտվան համայնքի ղեկավարի հետ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

2. Տնվարարական աշխատանքներն իրականացնել 36 ամսվա ընթացքում

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

Ընտրության արժեքային աստիճանի և սպասարկողի երաշխավորագրի համաձայնեցվել են հրավառու մարմնի, որենքով սահմանված այլ շահագրգիռ  
առարկերի՝ Արտվան համայնքի ղեկավարի հետ

2.3. Այլու անունով, թելեգրամի շահագրգիռման, բողոքարկության, ստացումը

- արժեքային աստիճանի և սպասարկողի երաշխավորագրի ամիս
- արժեքային աստիճանի և սպասարկողի երաշխավորագրի ամիս

Ընտրության արժեքային աստիճանի և սպասարկողի երաշխավորագրի համաձայնեցվել են հրավառու մարմնի, որենքով սահմանված այլ շահագրգիռ  
առարկերի՝ Արտվան համայնքի ղեկավարի հետ

և ժողովարարական մարմնի մատակարարության մասին հարցազրույցով է 19 էջից, կարգված և ընդունվելով է Արտվան համայնքի  
ղեկավարի կողմից

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

4. Առանձնաձև աշխատանքները մոտիվավել են (ընդգրկում է N 1 հավելվածը 108-րդ կետով սահմանված  
ուսուցումը) կողմից

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

1. Արտվան կամ վարչակազմի համաձայնեցվել իրավառու մարմնի և այլ շահագրգիռ մարմինները հետ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին հաստատված օրենսդրության հիմամբ

5. Հնարավոր պայմաններ

Ընտրության արժեքային աստիճանի և սպասարկողի երաշխավորագրի համաձայնեցվել են հրավառու մարմնի, որենքով սահմանված այլ շահագրգիռ  
առարկերի՝ Արտվան համայնքի ղեկավարի հետ

վասնե՝ կրող սուբյեկտների հետ:

2) շինարարության թույլտվության սահմանված ժամկետներում կառուցատեղումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ պատերով սահմանված պահանջները:

3) (ընթացում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված վարձով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային տեսակաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների լուծման աստիճանի հաջորդականությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԿԱԿՈՒՄՍԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

4) (ընթացում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով որ գտնուցվող շքանշան շինարարությունը ենթարկվող չէ առանց գլխավոր հատակագծի վրա \_\_\_\_\_ համարների տալ նշման ջնաթի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԿԱԿՈՒՄՍԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

ստեղծվեցանք ուղջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական **09072024-07-0097**) տրտած սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է՝ Օրյելտի քանդման աշխատանքներ, հրապանացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7) այլ առթյուներ շինհրապարակում ապահովել ժամանակավոր ցանկապատի և տեղեկատվական վահանակի առկայությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԿԱԿՈՒՄՍԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

8) Կառուցատեղումը շրջաբառական (քանդման, ապամոլ տաժման) աշխատանքներն ընտելող անելուց, Երևան, Խաչատրյան N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավաբան մարմին:

9) 3-լիցիտիայի դիման վրա գրանցույց շինարարական և գույքաիրավաբանական կարող է իրականացվել տասնհինգերորդ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերով, և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԽԱՆԱԿԱՆ ԿԱԿՈՒՄՍԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ**

**ԷԴՈՒՄԱՐԴ ԲԱԲԵՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԿԱԿՈՒՄՍԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

Գ. Տ.  
(ձև) փուլի 16.06.16 N 630-Ս)

23.09.2024  
**ՀԱՎԱՆՑՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3945

**«ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2024  
ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈՒՄՆԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, բովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Սերգեյ Բաղդոյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 18-ի N S-1855)։

1. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2024 թվականի ընթացքում Արովյան համայնքի Արովյան քաղաքի Սևանի փողոցի թիվ 8 հասցեում գտնվող 904.8 քառակուսի մետր մակերեսով խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 232 կցվում է)։

2. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 182 000 (հարյուր ութսուներկու հազար) դրամ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19

ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽ - 232

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈԼԱՅԻՆ  
ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

**Տրված՝ 19 սեպտեմբերի 2024թ.**

Թույլատրված գործունեության անվանումը՝  
**Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք:**

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

**«ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պարասխանադրությամբ ընկերություն, ՀՀ Երևան Կենտրոն Բաղրամյան պ. թիվ 18, ՀՎՀՀ՝ 00239053:**

Գործունեության իրականացման վայրը՝ **ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան համայնք ք. Աբովյան Սևանի փ. թիվ 8, խանութ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հունվարի 2024թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2024թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԿԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3944

**«ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2024  
ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, Արմվյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հիմք ընդունելով «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Սերգեյ Բաղդոյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 17-ի N S-1851)։

1. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2024 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում Արմվյան համայնքի Արմվյան քաղաքի Սևանի փողոցի թիվ 8 հասցեում գտնվող խանութում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 29 կցվում է)։

2. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Արմվյանի համայնքապետարանի 900105201843 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 45 000 (քառասունհինգ հազար) դրամ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 19  
ք. Արմվյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԱՔՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՏՀՎ - 29

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ  
ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ 19 սեպտեմբերի 2024թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝  
**Տեխնիկական հեղուկների վաճառք:**

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

**«ՊՎ-ԵՐԵՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ՀՀ Երևան Կենտրոն Բաղրամյան պ. թիվ 18, ՀՎՀՀ՝ 00239053:**

Գործունեության իրականացման վայրը՝ **ՀՀ Կոտայքի մարզ Արուսյան համայնք ք. Արուսյան Սևանի փ. թիվ 8, խանութ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 ապրիլի 2024թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2024թ.-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՂԱՎԱՐ



ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3943

**«ԻՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԻՇԻ» ԱՆՀԱՏ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ  
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ԵՏՂԱԴԻԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Արավյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 113-Ն, 2023 թվականի ապրիլի 13-ի N 52-Ն և դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշումների, հաշվի առնելով «Իրա Գրիգորյան Եղիշի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 18-ի N Բ-6873)։

1. Թույլատրել «Իրա Գրիգորյան Եղիշի» անհատ ձեռնարկատիրոջը 2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Արավյան համայնքի Արավյան քաղաքի Հատիսի փողոցի թիվ 1/82 հասցեում տեղադրել արտաքին գովազդ (Թույլտվություն N 68 կցվում է)։
2. Հաստատել արտաքին գովազդի էքզիզները՝ համաձայն հավելվածի։
3. «Իրա Գրիգորյան Եղիշի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Արավյանի համայնքապետարանի 900105201611 հաշվեհամարին վճարել 47 340 (քառասունյոթ հազար երեք հարյուր քառասուն) դրամ տեղական տուրք՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Իրա Գրիգորյան Եղիշի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. սեպտեմբերի 19  
ք. Արավյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ԱԳ - 68

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

Տրված՝ 19 սեպտեմբերի 2024թ.

Թույլատրված գործունեության անվանումը՝  
**Այլ արտաքին գովազդի տեղադրում:**

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

**«Իրա Գրիգորյան Եղիշի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ Արովյան համայնք գյուղ Գեղաշեն 5 փ. 30 փ., ՀՎՀՀ՝ 43125188:**

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝ **ՀՀ Կոտայքի մարզ Արովյան համայնք Արովյան քաղաք Հափիսի փողոց թիվ 1/82, 5.26 քմ:**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01 հուլիսի 2024թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2024թ.-ը:**



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻԻ ԷՍՔԻԶ



$0.4 \cdot 0.3 \cdot 6 = 0.72 \text{ քմ}$

$0.3 \cdot 0.2 \cdot 11 = 0.66 \text{ քմ}$

$0.15 \cdot 0.2 \cdot 16 = 0.48 \text{ քմ}$



$0.5 \cdot 0.4 \cdot 17 = 3.4 \text{ քմ}$

Ընդ. մակերես՝ 5.26 քմ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 սեպտեմբերի 2024 թվականի N 3942

**«ԻՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԻՇԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ  
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

